



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 21 » 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0131-21

Ձեռնարկողը՝

Հրայր Հակոբյան

ՀՀ, ք.Երևան, Նոյ թաղամաս, 119

Գործունեությունը՝

Լոռու մարզի, Գյուլագարակ համայնքի, Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենսարնային քոթեջների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

ՀՀ, Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գարգառ, Սոճուր փողոց 7, 9, 10, 11, 12

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

թիվ ԲՓ 0131-21
<ձ1> 0X 2021թ.

Լոռու մարզի, Գյուլագարակ համայնքի, Գարգառ գյուղում հյուրանոցային համալիրի և մենատնային քրթեջների կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	Հրայր Հակոբյան
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ՀՀ, Լոռու մարզ, Գյուլագարակ համայնքի, գ.Գարգառ

Ներածական մաս Գործունեության նպատակն է գյուղական միջավայրում կառուցել ժամանակակից հարմարություններով հյուրանոցային համալիր և մենատնային քրթեջներ:

Հյուրանոցային համալիրի և մենատնային քրթեջների կառուցման նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 18032021-06-0046, 18032021-06-0047, 18032021-06-0051, 18032021-06-0056 վկայականներները՝ տրված 2021թ մարտի 18-ին, Գյուլագարակի համայնքի ղեկավարի կողմից տրված 22.04.2021թ. N 03/21 ճարտարապետահատակագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

- Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 4.36223 հա,
- շինությունների կառուցապատման մակերեսը՝ 7200 քմ (քրթեջներ) և 5000 քմ (հյուրանոց),
- ներքին ճանապարհների և այլ կառույցների մակերեսը՝ 4800 քմ,
- կանաչապատ տարածքի մակերեսը՝ 26622.3 քմ:

Նախատեսվող գործունեության տարածքում հողակտորները ներկայումս չեն օգտագործվում, դրանք ամայի տարածքներ են, որոնց վրա չկան շինություններ կամ ենթակառուցվածքներ: Հողամասերը մեծամասամբ խոտածածկ են: Տարածքը նախկինում ենթարկվել է ինտենսիվ հողօգտագործման և ներկայում այն չի օգտագործվում նույնիսկ որպես արոտավայր:

Տարածքը գրունտային ճանապարհով միացված է միջհամայնքային ասֆալտապատ ճանապարհին: Գրունտային ճանապարհի երկարությունը մինչև ներկայացվող հողամաս կազմում է 700 մ:

Հողամասի արևելյան և հարավային կողմերից 50÷60 մ հեռավորության վրա ձգվում են անտառաշերտեր, իսկ դեպի հարավ-արևելք՝ 750÷1000 մ հեռավորության վրա գտնվում է «Գյուլագարակ» պետական արգելավայրը:

Գարգառ գյուղի մոտակա բնակելի տներից հողամասը գտնվում է 2.2 կմ հեռավորության վրա, Գյուլագարակ գյուղից՝ 1.9 կմ:



